

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՀԱՅԿ ԽԱՉԻԿԻ

**ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ
(1946-1970 ԹԹ.)**

**Է.00.02- «ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2011

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտում**

Գիտական ղեկավար՝

**պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ Ա. Պ. Փոլադյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

**պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ Վ. Ա. Բայբուրդյան**

**պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Ա. Ա. Փաշայան**

Առաջատար կազմակերպություն՝


**Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան**

**Պաշտպանությունը կայանալու է 2011 թ. դեկտեմբերի 12-ին, ժ. 13.30-ին,
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող գիտական
աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդի
նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):**

**Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտի գրադարանում:**

Սեղմագիրն առաքված է 2011 թ. նոյեմբերի 10-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու՝**



Ռ. Պ. Ղազարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սիրիայի Արաբական Հանրապետությունում (այսուհետ՝ ՄԱՀ) բանակի դերի ուսումնասիրությունն ունի գիտական և քաղաքական կարևոր նշանակություն: Առանց բանակի դերակատարության ուսումնասիրության գրեթե անհնար է հասկանալ Սիրիայի նորագույն շրջանի քաղաքական պատմության շատ ու շատ իրողություններ:

ՄԱՀ նոր պատմության ամենահանգուցային ժամանակահատվածներից մեկը 1946-1970թթ. ընդգրկող շրջանն է՝ 1946թ. ապրիլի 17-ին Սիրիայի տարածքից անգլո-ֆրանսիական զորքերի վերջնական դուրս բերումից և Սիրիայի անկախության հռչակումից մինչև 1970թ. նոյեմբերին Հաֆեզ Ալ-Ասադի (1970-2000թթ.) իշխանության գալը, երբ երկրի քաղաքական կյանքում առանձնահատուկ դերակատարություն ձեռք բերեցին զինված ուժերը (այսուհետ՝ ՋՈւ):

Թեմայի հետազոտությունը կարևոր է՝ Սիրիայի ազգային բանակի կայացման գործընթացը ճիշտ ընկալելու տեսանկյունից: Էական է նաև Սիրիայի ազգային բանակի ռազմաքաղաքական ուղեգծի և մասնավորապես սպայակազմի կազմի ուսումնասիրությունը, ինչը հնարավորություն է տալիս ավելի խորքային ընկալել թե՛ մինչև 1970թ., թե՛ դրանից հետո Սիրիայի հասարակական-քաղաքական գործընթացներն ու դրանցում էթնիկ և դավանական տարրի որոշակիորեն ազդեցիկ դերակատարության առանձնահատկությունները:

Հատկանշական է, որ սիրիական բանակը ձևավորման սկզբնական շրջանում հիմնականում համալրվում էր ծայրամասային, առանձին դեպքերում նաև սոցիալապես ոչ զարգացած շրջանների էթնիկ և դավանական փոքրամասնությունների ներկայացուցիչներից (ալավիներ, դրուզներ, իսմայիլականներ, քրդեր, չերքեզներ, հայեր և այլք), ովքեր բանակային ծառայությամբ նպատակ էին հետապնդում բարելավել իրենց սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև ապահովել զինվորական կարիերայում առաջընթացը: Այս միտումն, ընդհանուր առմամբ, շարունակվեց նաև հետագայում՝ մեծացնելով երկրում փոքրամասնությունների կշիռը:

Սիրիայի՝ որպես անկախ պետության ձևավորման, սիրիական բանակի կազմավորման, սպայական վերնախավի և վերջապես քաղաքական կյանքում բանակի ունեցած դերակատարության պատմության նշված ժամանակահատվածն ընդունված է բաժանել երեք շրջանի՝ անկախացումից մինչև Եգիպտոսի հետ միավորումը (1946-1958թթ.), Արաբական Միացյալ Հանրապետության (այսուհետ՝ ԱՄՀ) գոյության երեք ու կես տարիները (1958-1961թթ.) և ԱՄՀ-ի փլուզումից մինչև Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալը (1961-1970թթ.): Հատկանշական է, որ ՋՈւ ամենակտիվ օղակը՝ սպայական վերնախավը, դարձավ պետական համակարգի անբաժան մասը և աստիճանաբար վերածվեց Սիրիայի քաղաքական կյանքի լուրջ գործոնի: Արաբական ոչ մի երկրում զինված ուժերը քաղաքական կյանքում թերևս այնքան գերիշխող դեր չեն ունեցել, որչափ Սիրիայում, որի սպացույցը 1949-1970թթ.

Սիրիայում տեղի ունեցած տասից ավելի հեղաշրջումներն են: Հաճախակի տեղի ունեցող ռազմական հեղաշրջումները չէին կարող չխուչընդոտել Սիրիայի սոցիալ-տնտեսական և պետական կառավարման համակարգի բնականոն զարգացմանը:

Հատկանշական է, որ բանակն ինչպես նշված ժամանակաշրջանում, այնպես էլ հետագայում կարևոր դերակատարություն է ունեցել ոչ միայն Սիրիայի ներքին կյանքում, այլև նպաստել մերձավորարևելյան տարածաշրջանում Սիրիայի քաղաքական կշռի մեծացմանը: Հիշյալ թեման գիտականորեն արդիական է նաև ներկա փուլում Սիրիայում ընթացող ներքաղաքական բարդ գործընթացները (որտեղ բացառիկ կարևոր դեր է խաղում բանակը) ճիշտ գնահատելու առումով:

Սիրիայում բանակի դերի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն Սիրիայի նշված շրջանի պատմության, տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում Սիրիայի ունեցած նշանակության, այլև՝ Սիրիայում հայ համայնքի առկայության և հայ-սիրիական արդի հարաբերությունների տեսանկյունից: Սիրիան տարածաշրջանում Հայաստանի ամենակարևոր գործընկերներից մեկն է, որի հետ համագործակցությունն ամրագրված է ամենատարբեր ոլորտներում, իսկ մերձավորարևելյան ուղղությունը Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություններից է:

Թեմայի կարևորությունը կապված է ևս մեկ այլ, ոչ պակաս կարևոր իրողության՝ նշված ժամանակատվածում Սիրիայի բանակում կարևորագույն դերակատարություն ստանձնած հայ ռազմական գործիչների, մասնավորապես՝ սիրիական բանակի գեներալներ Արամ Գարամանուկյանի, Հրանտ Մալոյանի և Ալբեր Քիլեջյանի գործունեության հետ: Հայ զինվորականները ծառայել են հոգուտ Սիրիայի ազգային անվտանգության՝ նպաստելով հայ-արաբական, մասնավորապես՝ հայ-սիրիական բարեկամության ամրապնդմանը:

2. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Աշխատանքի հիմնական նպատակն է բազմակողմանիորեն ուսումնասիրել բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում 1946-1970թթ. ժամանակահատվածում: Այդ նպատակով հեղինակի կողմից առաջադրվել են ստորև շարադրված խնդիրները:

- Քննության ենթարկել Սիրիայի ազգային բանակի կազմավորման հիմնական փուլերի և սպայական վերնախավի ձևավորման գործընթացը:
- Հետազոտել անկախության ձեռքբերումից հետո Սիրիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումներն ու դրանց պատճառները:
- Ուսումնասիրել ԱՄՀ-ի կազմավորման ընթացքում սիրիական բանակի դերակատարությունը:
- Լուսաբանել սիրիական բանակի սոցիալական՝ էթնիկ և դավանական կազմը:
- Քննության ենթարկել սիրիական բանակի դերն ԱՄՀ-ի փլուզման գործընթացում:

- Գիտարկել Միրիայի՝ Եգիպտոսի հետ միավորման շրջանում կազմավորված գաղտնի Ռ-ազմական կոմիտեի (այսուհետ՝ Ռ-Կ) վարած քաղաքականության իրական շարժառիթներն ու սպաների ունեցած դերը:
- Հետազոտել Արաբական վերածնունդ սոցիալիստական կուսակցության (այսուհետ՝ Բասա) 1963թ. մարտի 8-ին իրականացրած հեղաշրջման և բասասկան սպաների իշխանության հաստատման ու հետագա ամրապնդման գործընթացը:
- Լուսաբանել 1948 և 1967թթ. արաբ-իսրայելական պատերազմներում սիրիական բանակի ունեցած դերակատարության առանձնահատկությունները:
- Վերլուծել Միրիայում ձախբասականների իշխանության շրջանում սպայական վերնախավում ծավալված մրցակցությունը՝ գերակա դիրքեր գրավելու համար, ինչպես նաև ուսումնասիրել բանակի օգնությամբ Հաֆեզ Ալ-Ասադի իրականացրած իշխանավորության առանձնահատկությունները:
- Գիտական փաստերի համադրմամբ ի ցույց դնել անկախության ձեռքբերումից մինչև 1970թ. Միրիայի հայ ռազմական գործիչների և հայ ռազմական տարրի՝ սիրիական բանակում ունեցած դերակատարումը:

3. ՌԻՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Միրիայի 1946-1970թթ. ներքին և արտաքին քաղաքականության հետ կապված առանձին հիմնախնդիրներ բազմիցս ուսումնասիրության առարկա են դարձել տարբեր հեղինակների, մասնավորապես՝ հայրենական, արևմտյան, ռուսաստանցի, ինչպես նաև խորհրդային հետազոտողների աշխատություններում: Սակայն Միրիայի բանակի կազմավորման, սպայական կազմի ձևավորման և բանակի դերակատարությունը երկրի քաղաքական կյանքում չեն դարձել ամբողջական գիտական ուսումնասիրության առարկա: Ատենախոսության թեման հայրենական արաբագիտության մեջ դեռևս չի արժանացել առանձին և համակողմանի ուսումնասիրության: Փաստագրական և այլալեզու հետազոտությունների հենքի վրա փորձ է արվել նորովի մեկնաբանել տվյալ ժամանակաշրջանի իրողությունները:

4. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1946-1970 թվականները՝ Միրիայի անկախության ձեռքբերումից մինչև Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալը: Ընտրությունը պայմանավորված է նշված ժամանակահատվածի կարևորությամբ, երբ Միրիան, թոթափելով գաղութային անցյալը, թևակոխեց արդիականացման՝ քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացման մի նոր շրջան: Սակայն Միրիայի ներքաղաքական կյանքում բանակի գործոնի ակտիվ դերակատարությունը, 1946-1970թթ. երկրում հաճախակի տեղի ունեցող ռազմական հեղաշրջումներն ու արաբ-իսրայելական երեք պատերազմները, լուրջ դժվարություններ ստեղծեցին երկրի սոցիալ-տնտեսական և պետական կառավարման համակարգի բնականոն զարգացման համար:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են Սիրիայի քաղաքական կյանքում բանակի դերի վերլուծության պատմաքննական, պատմահամեմատական և համադրական մեթոդները: Համադրվել և բովանդակային վերլուծության են ենթարկվել խնդրին վերաբերող արաբական, եվրոպական, ռուսական և ամերիկյան աղբյուրներն ու գրականությունը:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն ատենախոսության մեջ առաջ քաշված հիմնադրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել Սիրիայի նորագույն պատմության առանձին հիմնահարցերին նվիրված ուսումնասիրություններում: Աշխատանքում տեղ գտած որոշ դրույթներ կարող են օգտագործվել նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագիտական դասընթացներում, ինչպես նաև ընդհանուր կրթական ծրագրերում: Աշխատանքում տեղ գտած տարբեր գնահատականները կարող են օգտակար լինել պետական հաստատությունների համար տարբեր տեղեկատվական և վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև Սիրիայի նկատմամբ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության որոշ մոտեցումներ մշակելու տեսանկյունից:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՉԱԸՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնի նիստում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի հրապարակած գիտական հոդվածներում, երիտասարդ արևելագետների համրապետական գիտաժողովում ներկայացված զեկույցում:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԿՁԲՆԱԴԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, արաբերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների ու հետազոտությունների հիման վրա: Հեղինակն աշխատել է ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի, Դամասկոսի Հաֆեզ Ալ-Ասադի անվան և Դամասկոսի արաբագիտական հետազոտությունների ֆրանսիական ինստիտուտի, Հալեպի Վիլյետ Ջեբեջյան, ինչպես նաև ՌԳԱ Արևելագիտության ինստիտուտի (РАН ИВ), Հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության ինստիտուտի (РАН ИНИОН), Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի ինստիտուտի

(МГУ им. М. В. Ломоносова ИСАА), Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (МГИМО) գրադարաններում և Ռուսաստանի պետական գրադարանի ատենախոսությունների բաժնում (РГБ): Հետազոտությանը մեծապես նպաստել են պաշտոնական հրատարակումները, քաղաքական գործիչների հայտարարություններն ու ելույթները, պարբերականները, հայ և օտարազգի հետազոտողների՝ վերոհիշյալ թեմային նվիրված արժեքավոր աշխատություններն ու հոդվածները:

Ատենախոսության մեջ քննարկվող խնդիրների ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուր են ծառայել Սիրիայի ռազմական և քաղաքական գործիչների ելույթների, հարցազրույցների հրատարակումները և հուշագրությունները¹, Սիրիայի ընտրական օրենքը², Բասս կուսակցության համագումարների որոշումներն ու ծրագրերը³:

Աշխատության մեջ օգտագործվել են արաբական մի շարք աղբյուրներ, որոնք վերաբերում են Սիրիայի բանակի կազմավորմանը, ռազմական հեղաշրջումներին, Բասս կուսակցության գործունեության տարբեր ասպեկտներին, Սիրիայի ներքին և արտաքին քաղաքականության առանձին դրսևորումներին: Արաբ հեղինակներից հարկ է առանձնացնել ռազմական և քաղաքական գործիչներ Մ. Տլասի⁴, Հ. Թուրքմենի⁵, Վ. Ալ-Մուալիմի⁶, Մ.

١ حديث مع عفيف البزري، سجل الحديث وكتبه سمير رباح، بيروت، آذار ١٩٨٩، حديث مع عفيف البزري، سجله مالك المفتي، دمشق، ٢٢ حزيران، ١٩٩١، الكلمات التي ألقاها السيد رئيس الدولة الدكتور نور الدين الأتاسي خلال عام ١٩٦٦، صبري العسلي للمؤلف، دمشق، ٩ تشرين الثاني، ١٩٦٠، بيان الرئيس جمال عبد الناصر، القاهرة، ١٩٦١، الحزب الشيعي السوري في عهده الخمسين، الزكري الخمسون التأسيس الحزب الشيعي السوري ١٩٢٤-١٩٧٤، الجلد الثالث، دمشق، ١٩٧٩، يوميات ووثائق الوحدة المصرية-السورية ١٩٥٨-١٩٦١، الجلد الأول، ١ شباط-٣٠ نيسان ١٩٥٨، بيروت، ١٩٨٧، ذكريات الامير عادل ارسلان عن حسنى الزعيم، رائد الانقلابات العسكرية في سورية، بيروت، ١٩٦٢، مذكرات الامير عادل ارسلان، الجزء الثاني، ١٩٤٦-١٩٥٠، بيروت، ١٩٨٣، أحمد الجندي، زكري الجابري، دمشق، بناء دار المهندسين، سلمى مردم بك، أوراق جميل مردم بك، استقلال سورية ١٩٣٩-١٩٤٥، بيروت، ١٩٩٤، محمد معروف، أيام عشتها ١٩٤٩-١٩٦٩، الانقلابات العسكرية وأسراها في سورية، بيروت، ٢٠٠٣، خالد العظم، مذكرات خالد العظم، ج ٣، بيروت، ١٩٧٣،

Antoun Sa'adeh, Leadership and Testimony, Syrian Social Nationalist Party Information Bureau.

² The Electoral Law of Syria, Decree No. 17., September 10, 1949.

³ حزب البعث العربي الاشتراكي، القيادة القومية، دراسة تاريخية تحليلية موجزة لنضال حزب البعث العربي الاشتراكي ١٩٤٣-١٩٧٢، دمشق، ١٩٧٢،

حزب البعث العربي الاشتراكي، القيادة القومية، المنهاج الحزبي، ١٩٦٥، تموز ٢٢.

٤ مصطفى طلاس، تاريخ الجيش العربي السوري، الجلد الأول، ١٩٠١-١٩٤٨، مركز الدراسات العسكرية.

مصطفى طلاس، تاريخ الجيش العربي السوري، الجلد الثاني، ١٩٤٩-١٩٧٠، مركز الدراسات العسكرية.

٥ حسن توركماني، تاريخ الجيش العربي السوري، الجلد الثالث، ١٩٧٠-٢٠٠١، مركز الدراسات الاستراتيجية.

٦ وليد المعلم، سوريا ١٩١٨-١٩٥٨، دمشق، ١٩٨٥.

Աֆլակի⁷, Ի. Հինդի⁸, Մ. Թակա Ադ-Դինի⁹, Ֆ. Շաիրի¹⁰, Ա. Արդ Ալ-Բարիմի¹¹, Ն. Ալ-Արմանագի¹² արժեքավոր աշխատությունները, ինչպես նաև արաբ հետազոտողներ Ս. Ալ-Ջունդի¹³, Ն. Արդ Ան-Նաբի Բիզի¹⁴, Բ. Ալ-Աուֆի¹⁵, Մ. Ռիդվան Ալ-Աթասի¹⁶, Ա. Ռիդայի¹⁷, Ս. Ալ-Մադանի¹⁸, Արդ Ալ-Ալի¹⁹, Ի. Մուհամմադ²⁰, Արդ Ալ-Կադիր Հաթիմի²¹, Մ. Ա. Ղ. Ատ-Տաուիլ²², Է. Բուսթանի²³, Բ. Ալ-Ջաֆրի²⁴, Ֆ. Ջարգուրի²⁵ և այլոց հետազոտությունները:

Հայ արևելագիտությունը լավագույնս ուսումնասիրել է արաբական երկրների, մասնավորապես Սիրիայի նորագույն շրջանի պատմությանն առնչվող հարցերը, որի վկայությունն են Ն. Հովհաննիսյանի, Հ. Սարգսյանի,

-
7. ميشيل عفلق، في سبيل البعث، الكتابات السياسية الكاملة، الجزء الاول، بيروت، ١٩٥٩، ميشيل عفلق، في سبيل البعث، الكتابات السياسية الكاملة، الجزء الثاني.
8. احسان هندي، كفاح الشعب العربي سوري ١٩٠٨-١٩٤٨، دمشق، ١٩٦٢.
9. منير تقي الدين، الجلاء، بيروت، ١٩٥٦.
10. فوزي شعيبي، شاهد من المخابرات السورية ١٩٥٥-١٩٦٧، بيروت، ٢٠٠٨.
11. أحمد عبد الكريم، أضواء على تجربة الوحدة، الطبعة الثانية، دمشق، ١ / ١٩٩١، أحمد عبد الكريم، حصاد سنين خصبة وثمارة، بيسان للنشر والتوزيع، ١٩٩٤.
12. نجيب الأرمنازي، محاضرات عن سوريا من الاحتلال حتى الجلاء، القاهرة، ١٩٥٣.
13. سامي الجندي، البعث، دار النهار للنشر، بيروت، ١٩٦٩.
14. ناجي عبد النبي بزي، سورية، صراع الاستقطاب، دراسة وتحليل لأحداث الشرق الأوسط والتدخلات الدولية في الأحداث السورية ١٩١٧-١٩٧٣، دمشق، ١٩٩٦.
15. بشير العوف، الانقلاب السوري، دمشق، ١٩٤٩.
16. محمود رضوان الأتاسي، هاشم الأتاسي، حياته وعصره، دمشق.
17. علي رضا، قصة الكفاح الوطني في سورية، عسكرياً وسياسياً حتى الجلاء، حلب، ١٩٧٩.
18. سليمان المدني، عدنان مناغخي، هؤلاء حكموا سورية، دمشق، ٢٠٠٩.
19. عبد العال، عاسم الدسوقي أ. د.، الانقلابات العسكرية في سوريا ١٩٤٩-١٩٥٤، مكتبة مدبولي، ٢٠٠٧.
20. إبراهيم محمد محمد إبراهيم، مقدمات الوحدة المصرية السورية ١٩٤٣-١٩٥٨، مطابع الهيئة المصرية العامة للكتاب، ١٩٩٧.
21. عبد القادر حاتم، الجمهورية العربية المتحدة، القاهرة، ١٩٥٨.
22. محمد أمين غالب الطويل، تاريخ العلويين، دار الأندلس، ١٩٨١.
23. ادوار البستاني، الكتاب الذهبي لجيوش الشرق ١٩١٨-١٩٣٦.
24. بشار الجعفري، السياسة الخارجية السورية ١٩٤٦-١٩٨٢، دمشق، ١٩٨٧.
25. فاريس زرزور، معارك الحرية في سورية، دمشق، ١٩٦٢.

Շ. Կարամանուկյանի, Հ. Գրիգորյանի, Հ. Թովուզյանի, Պ. Սարաջյանի և այլոց մենագրություններն ու հոդվածները²⁶:

Սիրիական բանակի հայ ռազմական գործիչների վերաբերյալ հետազոտվող խնդիրների քննությանը նպաստել են Սիրիայի բանակի գեներալ Ա. Գարամանուկեանի, Ռ. Ճեպեճեանի, Ե. Պապայեանի, Գ. Ա. Սարաֆեանի, Յ. Միմնեանի, Ե. Հ. Տոլպագեանի, Մ. Էպլիդաբեանի, Պ. Ադամեանի, Ա. Քեշիշյանի, Հ. Ազեզեանի և այլոց արժեքավոր աշխատությունները, Գեղարդ սիրիահայ տարեգրքի հատորները, ինչպես նաև դաշտային հետազոտություններն ու հարցազրույցները²⁷:

²⁶ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր 3, Երևան 2006, Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր 4, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005 թթ., Երևան 2007, Հովհաննիսյան Ն.. Սարգսյան Հ., Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1946 թթ.), Երևան, 1975, Սարգսյան Հ. Ս., Սովետա-սիրիական տնտեսական ու տեխնիկական համագործակցությունը (1955-1970 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր 6-րդ, Երևան, 1974, Կարամանուկյան Շ. Լ, Արաբական Պետությունների Լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988, Գրիգորյան Հ. Ս., Սիրիայի ձախբասական դեկլարության դիրքորոշումը մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ (1967-1970 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր 14-րդ, Երևան, 1987, Գրիգորյան Հ. Ս., Սիրիայի պայքարը «Փրաք փեթրոլիում քոմփանիի» հետ կոնցեսիոն համաձայնագրի վերանայման համար, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատոր 15-րդ, Երևան, 1989, Григорян Г. М., Позиция Сирии в ближневосточном конфликте, Ереван, 1989, Թովուզյան Հ. Խ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946 թթ.), Երևան, 1986, Սարաջյան Պ. Հ., Արաբական Արևելքի Կոմունիստական կուսակցությունների և առաջադիմական ուժերի պայքարը դեմոկրատիայի և սոցիալ-տնտեսական վերափոխումների համար, Երևան, 1986, Саралджян П. А., Сирийская Коммунистическая партия о социально-политическом характере развития страны (70-е начало 80-х гг.), Проблемы современной советской Арабистики, Ереван, 1988:

²⁷ Գարամանուկեան Ա., Հայկական Լեգիոնը պատմական, իրաական ու քաղաքական հարցերու լույսին տակ և վաերագրեր, Հայկազեան Հայագիտական Հանդես, հ. Ե., Պեյրոթ, 1974, Karamanoukian A., Les Etrangers et le service militaire, Paris, 1978, Գարամանուկեան Յ., Չօրավար Արամ Գարամանուկեանի կեանքն ու գործը, Ֆորթ Լի. Նիի Ճըրզի, ԱՄՆ, 1998, Ճեպեճեան Ռ., Ինքնակենսագրություն, յուշեր և գործունեություն, Հայկա, 1999, Պապայեան Ե., Պատմություն Անթեպի Հայոց, Գ. հատոր, Լոս Անճելլոս, Գալիֆորնիա, 1994, Նոր Այնթապ, Ի Բ. տարի, թիւ 9-10 (81-82), նոր շրջան, Լիբանան, 1995, Սարաֆեան Գ. Ա., Այնթապի հայ սպանի սուրիական բանակին մէջ, Պատմություն Անթեպի Հայոց, Բ. հատոր, Լոս Անճելլոս, Գալիֆորնիա, 1953, Միմնեան Յ., Յախելուձ Այնթապի Հայոց Պատմութեան, Մայրենի Հրատարակատուն, Ուիլյոքսթ, ԱՄՆ, 1997, Տոլպագեան Ե. Հ., Հայրենական մամականի ի պատիւ Չօր. Գարամանուկեանի, Նոր Այնթապ, թիւ 44-56, Լիբանան, 1971-1973, Էպլիդաբեան Մ., Գաղթակայանէն խորհրդարան, Հայկա, 1998, Atamian P., Histoire de la communauté Arménienne catholique de Damas, Beyrouth, 1964,

كشيشيان أ.، إسهامات المواطنين الارمن في الحياة العامة للبلاد السورية منذ أقدم العصور وحتى يومنا، حلب، ٢٠٠٧،
كشيشيان أ.، صفحات وثائقية من جريدة (التقدم) الحلبية عن الأحوال الأرمنية والعربية في الدولة العثمانية والبلاد الشامية، عزرايان ه.، نبذة تاريخية موجزة عن الجاليات الارمنية في البلاد العربية (سورية، لبنان، مصر، فلسطين، الاردن...)، اللاذقية، ١٩٩٣.

Աշխատությանը մեծապես նպաստել են նաև խորհրդային և արդի շրջանի ռուսաստանցի հետազոտողների արժեքավոր աշխատությունները Սիրիայի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրների ներքին և արտաքին քաղաքականությանը, տարածաշրջանային քաղաքական և ռազմական հիմնահարցերին և արաբ-խրայելական հակամարտությանը նվիրված մեծագրություններն ու հոդվածները, որոնցից արժանի է նշել Գ. Ի. Միրսկու, Է. Փիր-Բուդաղովայի, Է. Ռիսի, Մ. Գատաուլիևի, Վ. Վավիլովի, Օ. Կաջալայի, Վ. Կլյուշինի, Վ. Կուչինի, Յ. Լուկոնինի, Վ. Ռանչինսկիի, Վ. Սաուտովի, Վ. Անմերովի, Վ. Յուրչենկոյի²⁸ և Ս. Աբու Գլյունի, Իսամ Աֆաշի, Սախաուֆ

Գեղարդ Սուրիահայ տարեգիրք, Ա տարի, Հալեպ, 1975, Գեղարդ Սուրիահայ տարեգիրք, Բ. գիրք, Հալեպ, 1976-1978, Գեղարդ Սուրիահայ տարեգիրք, Ե. գիրք, Հալեպ, 1996, Հարցազրույցներ՝ Սիրիայի բանակի գեներալ Ավետիս Արսլանյանի հետ, Դամասկոս, 2009, Սիրիայի բանակի գեներալ Հրանտ Մալոյանի մտերիմ՝ Սարգիս Քեչիշյանի հետ, Դամասկոս, 2009, Սիրիայի բանակի գեներալ Ալբեր Քիլեջյանի կնոջ՝ Գարուն Քիլեջյանի հետ, Դամասկոս 2009, Վարուժան Սալաթյանի հետ, Դամասկոս, 2009, Ալեքսանդր Քեչիշյանի հետ, Դամասկոս, 2009, Լաթակիայի Թիշրին համալսարանի դասախոս՝ Արաբական աշխարհագրագետների միության փոխնախագահ Նադիմ Շամսինի հետ, Դամասկոս, 2010, պ.գ.թ. Հուրի Ազեգյանի հետ, Հալեպ, 2010, Ռ-Գ-Ա Արևելագիտության ինստիտուտի (РАН ИВ) ավագ գիտաշխատող պ.գ.թ. Վլադիմիր Վանդուլի հետ, Մոսկվա, 2011, Սիրիայի բանակի գեներալ Արամ Գարամանուկյանի եղբորորդի՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնի վարիչ պ.գ.թ. Շահեն Կարամանուկյանի հետ, Երևան, 2011:

²⁸ Мирский Г. И., Армения и политика в странах Азии и Африки, М., 1970, Мирский Г. И., Проблемы социалистической ориентации в арабских странах и роль военных, Проблемы современной советской Арабистики, Ереван, 1988, Мирский Г. И., Третий мир: общество, власть, армия, Москва, 1976, Пир-Будагова Э. П., Антиимпериалистическая и демократическая борьба сирийского народа в 1949-1958 гг., Академия Наук СССР, Институт Народов Азии, Диссертация, Москва, 1967, Пир-Будагова Э. П., Сирия в борьбе за упреждение национальной независимости (1945-1966 гг.), Москва, 1978, Փիր-Բուդաղովա Է. Պ., Քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Սիրիայում (1962-1970 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. հատոր 9-րդ. Երևան, 1978, Рысь Э. В., Политическая борьба в Сирии в 1946-1963 гг., МГИМО МНД СССР, Диссертация, Москва, 1971, Гатауллин М., Сирия, Москва, 1956, Вавилов В., Симантовский И., Социально-экономические проблемы развивающихся стран, Сирия, Москва, 1975, Каджая О. Ш., Образование Объединенной Арабской Республики и некоторые черты ее политики (1958-1960 гг.), Академия общественных наук при ЦК КПСС, Диссертация, Москва, 1961, Ключини В. Н., Советско-сирийские отношения 1966-1976 гг., Диссертация, Киевский орден Ленина, Государственный Университет имени Т. Г. Шевченко, Киев, 1978, Кучин В. Д., Сирийская Аравская Республика и ее Вооруженные Силы, Военное Издательство Министерство Обороны СССР, М., 1976, Луконин Ю. В., Коммунисты Сирии и Ливана в борьбе за укрепление национальной независимости (1945-1947 гг.), Диссертация, Москва, 1956, Ранчинский В. П., Партия Аравского Социалистического Возрождения и национально-освободительное движение в Сирии (1940-1958 гг.), Университет Дружбы Народов имени Патриса Лумумбы, Диссертация, М., 1983, Саутов В. Н., Алавиты в общественно-политической жизни Сирии (40-е-90-е годы 20 в.), РАН ИВ, Диссертация, Москва, 2001, Ахмедов В. М., Армия и Политика в Современной Сирии, Армия и Власть на Ближнем Востоке: от Авторитаризма к Демократии (сборник статей), М., 2002, Ахмедов В. М., Сирия на рубеже столетий, власть и политика, Москва, 2003, Юрченко В. П., Сирия: Проблемы

Վաֆիկի, Հուսեյն Խալեդի, Բ. Ռ. Ալիվի, Ա. Ա. Գանիչի, Ա. Վ. Կոչխարիեվի, Ֆասիխ Բադերխանի, Մուհամմադ Տառաֆի, Վ. Մ. Ֆերդերնկոյի, Ն. Կ. Նեֆերովայի, Օ. Մ. Ռուդկովսկայայի, Ջարջիս Հասան Աբդուլայի, Ա. Ս. Մեհնուվի, Վ. Ա. Խրուլեվայի, Տ. Օ. Կոչարի Գաբիլի, Ռեզակ Իլյասի, Ա. Վ. Կոստրիկովի, Բազու Յասիրի ուսումնասիրությունները²⁹:

Հարկ է նշել նաև սիրիացի հեղինակների ռուսերեն լեզվով ուսումնասիրությունները, որտեղ առկա են բազմաթիվ հույժ օգտակար փաստեր, որոնք էապես նպաստում են Միջին Արևելքի ճգնաժամի սպառնալից վերահսկման և նրանց վարած ներքին ու արտաքին քաղաքականության առանձնահատկությունների պարզաբանմանը: Դրանցից կարելի է առանձնացնել Ադնան իբն Իսմայիլ Մախլուֆի, Սուլեյման Աբու Դիյաբի, Կանտար Մուհամմադ Ամինի, Օմար Մահմուդ Շաարի, Սալահ

Национальной Безопасности (Военная Политика и Военная Строительство в Период Правления ПАСВ 1963-2004 гг.), М., 2004.

²⁹ Абу Глюн М. Т., Отношения США с военными режимами в Сирии, Ученые Записки Центра Арабских Исследований, РАН ИВ, Москва, 2003, Иссам Аффраш, Отношения Сирии с СССР и США в 1945-1991 гг., РАН ИВ, Диссертация, Москва, 1999, Махлюф Вафик, Сирия и Советский Союз, Проблемы политического взаимодействия (20-е-начало 90-х гг.), РАН ИВ, Диссертация, Москва, 1998, Хусейн Халел, Сирия: социально-политическое развитие 1963-1993 гг., Диссертация, РАН ИВ, Москва, 1995, Алиев Б. Р., Северокавказская диаспора: История и современность, Махачкала, 2001, Ганич А. А., Черкесы в Иордании, МГУ ИСАА, Москва, 2007, Кушхавиев А. В., Черкесская диаспора в Арабских странах (19-20 вв.), Нальчик, 1997, Кушхавиев А. В., Генезис черкесской диаспоры в Арабском мире (на примере Сирии), АН СССР ИА, Автореферат диссертации, Москва, 1991, Кушхавиев А. В., Черкесы в Сирии, Нальчик, 1993, Балерхан Фасих, Северокавказская диаспора в Турции, Сирии и Иордании, Москва, 2001, Тарраф Мухаммед, Военные аспекты борьбы арабского народа против империалистической экспансии в Сирии, Ливане, Палестине и Иордании 1918-1946, Диссертация, Гуманитарная Орден Ленина и Октябрьской революции Краснознаменная Академия Вооруженных Сил, Москва, 1992, Федоренко В. М., Идеология и практика Партии Арабского Социалистического Возрождения в Сирии, Диссертация, Академия Наук СССР ИВ, Москва, 1970, Нефедова Н. К., Борьба Коммунистической партии Сирии за единый национальный фронт (1936-1966), Диссертация, Университет дружбы народов им. Патриса Лумумбы, Москва, 1970, Рудковская О. М., Формирование национальной интеллигенции Сирии во второй половине 20 века, диссертация, МГУ им. М. В. Ломоносова, ИСАА, Москва, 2005, Джарджис Хасан Абдулла, Курды в общественно-политической жизни Сирии в 1918-1962 гг., Диссертация, Академия Наук СССР ИВ, Москва, 1977, Меньшов А. С., Эволюция военно-технического сотрудничества государств Ближнего Востока во второй половине 20 в., Диссертация, Москва, 2010, Хрулева В. А., Сирия в составе Объединенной Арабской Республики (1958-1961 гг.), Диссертация, Академия Наук СССР ИВ, Москва, 1971, Кочарли Гавил Т. О., Партия Арабского Социалистического Возрождения в борьбе за национальной независимости Сирии (1943-1958 гг.), Диссертация, Академия Наук Азербайджанской ССР, Институт Народов Ближнего и Среднего Востока, Баку, 1983, Резак Ильяс, Военно-историческое исследование арабо-израильских войн 1948-1982 гг., Диссертация, Министерство Обороны СССР, Ордена Красной Звезды Институт Военной Истории, Москва, 1990, Востриков С. В., Роль армии во внешней и внутренней политике Сирийской Арабской Республики (1970-1990 гг.), Диссертация, Академия Наук СССР ИВ, Москва, 1991, Базу Ясир, Психологическая адаптация курсантов ВУЗов Сирийской Арабской Республики к воинской службе, Диссертация, Москва, 1998.

Աղ-Դին Մունլա Ալիի, Կոստեյ Ահմեդ Ունադի, Կանքար Մուհամմադ Կասիմի, Յուսեֆ Ջամիլ Սաադունի, Մուստաֆա Ֆաուազի, Յուսեֆ Ջեյն Աղ-Դինի, Ասադ Համադիի հետազոտությունները³⁰:

Սիրիայի պատմությանն առնչվող տարբեր խնդիրներին նվիրված արևմտյան ուսումնասիրողների աշխատությունների շարքում անհրաժեշտ է նշել Գ. Սլիի, Զ. Ս. Աբու Ջաբերի, Հ. Բատատուի, Ա. Կարլետոնի, Ռ. Հիններուշի, Ֆ. Հիթթիի, Դ. Հոփվուդի, Ֆ. Խոբրիի, Ս. Լոնգրիգի, Ա. Պեռլմուտերի, Ա. Ռաֆիմեյի, Դ. Ռոբերթսի և այլոց մեծագրությունները, հոդվածներն ու հրատարակումները³¹:

³⁰ Аднан ибн Исмаил Махлуф, Специальные войска Вооруженных Сил Сирийской Аравской Республики, Генеральный Штаб ВС САР, Диссертация, Дамаск, 1990, Абу Дияб Сулейман, Пасв и опыт организации политического пространства Сирии (1963-1999 гг.), РАН ИВ, Диссертация, Москва, 1995, Кантар Мохамед Амин, Сирия в борьбе за укрепление политической независимости и национальной государственности (1946-1967 гг.), Московский ордена Ленина и ордена Трудового Красного Знамени Педагогический Государственный Университет имени В. И. Ленина, Диссертация, Москва, 1991, Омар Махмуд Шаар, Социально-политическое развитие Сирии (1963-1970 гг.), Диссертация, Университет Дружбы Народов имени Патриса Лумумбы, Москва, 1983, Салах ад-Дин Мулла Али, Социально-политическое развитие Сирии (1918-1939 гг.), Диссертация, Университет Дружбы Народов имени Патриса Лумумбы, Москва, 1983, Кутейш Ахмед Унал, Средства массовой информации и их роль в обеспечении управления военной организацией Сирийской Аравской Республики, Диссертация, Военный Университет, Москва, 2001, Канвар Мухаммед Кассим, Совершенствование подготовки курсантов ввузов к воспитательной деятельности в частях Вооруженных Сил Сирийской Аравской Республики, Диссертация, Военный Университет, Москва, 1997, Юсеф Джамиль Саадун, Социально-политическое развитие Сирии в 1954-1963 гг., Диссертация, Университет Дружбы Народов имени Патриса Лумумбы, Москва, 1984, Мустафа Фауаз, Опыт советской спецпропаганды на Среднем Востоке в годы Второй мировой войны и возможности его использования в Сирийских Арабских Вооруженных Силах, Диссертация, Военный университет, Москва, 1998, Юсеф Зейн Ад-Дин, Совершенствование процесса воспитания дисциплинированности у курсантов ВУЗов Вооруженных Сил САР, Диссертация, Военный Университет, Москва, 1998, Асад Хамали, Формирование и развитие навыков и умений воспитательной работы у молодых офицеров Вооруженных Сил САР, Автореферат, Гуманитарная Орден Ленина и Октябрьской Революции Краснознаменная Академия Вооруженных Сил, Москва, 1994.

³¹ Seale P., The Struggle for Syria. A Study of Post-War Arab Politics (1945-1958), London, 1965, Seale P., Asad. The Struggle for the Middle East, University of California, Berkeley, Los Angeles, 1989,

باتريك سيل، الصراع على سورية ١٩٤٥-١٩٥٨، طلاسدار، دمشق، باتريك سيل، الأسد، الصراع على الشرق الأوسط، بيروت، ١٩٩٢

Abu Jaber Kamel S., The Arab Ba'th Socialist Party, History, Ideology, and Organization, Syracuse University Press, New York, USA, 1966, Batatu H., The Egyptian, Syrian, and Iraqi Revolutions: Some Observations on Their Underlying Causes and Social Character, Center for Contemporary Arab Studies, Georgetown University, Washington, 25 January, 1983, Batatu H., Some Observations on the Social Roots of Syria's Ruling, Military Group and the Causes for its Dominance, Middle East Journal, Vol. 35, No. 3, Summer, 1981, Carleton A., The Syrian Coups d'Etat of 1949, Middle East Journal, Volume 4, N. 1, J., 1950, Hinnebusch Raymond A., Authoritarian Power and State Formation in Ba'thist Syria: Army, Party and Peasant, Westview Press, Boulder, San Francisco & Oxford, 1990, Hitti P. K., Syria, A short history, London, 1959, Hopwood D., Syria 1945-1986, Politics and Society, St Antony's College, Oxford, London,

Ատենախոսության մեջ առաջ քաշված հիմնախնդիրների, Սիրիայի քանակի կազմավորման, սպայական վերնախավի ձևավորման, ներքաղաքական զարգացումների, և արտաքին ուժերի ազդեցության պատճառների և հետևանքների համակողմանի ուսումնասիրությանն ու ճիշտ ըմբռնելուն մեծապես նպաստել են Մ. Վան Գուզենի, Գ. Թորրիի, Է. Բենեիի և Ի. Ռաֆինովիչի աշխատությունները³²:

Պետք է հիշատակել նաև աշխատության համար շատ կարևոր Ն. Վան Գամի, Գ. Սոֆֆեռի, Ա. Իրիսալի, Է. Զիսեռի, Մ. Պալմեռի, Մ. Մաուգի, Ռ. Վինդեր Բեյլիի, Մ. Վինդրոուի, Ռ. Օլսոնի, Է. Դաունի, Վ. Պերտեսի, Տ. Պետրանի, Պ. Ռամեթի, Ա. Դաուդ-Աղայի, Ն. Բուու-Նախլիի, Գ. Գաուտերտաի հետազոտությունները³³:

Unwin Hyman, Boston Sydney Wellington, Khoury P. S., Syria and the French mandate, The politics of Arab Nationalism 1920-1945, London, 1987, Longrigg S. H., Syria and Lebanon under French Mandate, London, New York, Toronto, 1958, Perlmutter A., From Obscurity to Rule, The Syrian Army and the Ba'th Party, The Political Influence of the Military, New Haven and London, Yale University Press, 1980, Rathmell A., Secret War in the Middle East: The covert struggle for Syria 1949-1961, Tauris Academic Studies, I.B. Tauris Publishers, London-New York, 1995,

أندرو رايميل، الحرب الخفية في الشرق الأوسط، الصراع السري على سورية ١٩٤٩-١٩٦١، جميع الحقوق محفوظة،
توزيع دار سلمية للكتاب، ١٩٩٧،

Roberts D., The Ba'th and the creation of modern Syria, Croom Helm, London & Sydney, 1987.

³² Van Dusen M., Intra-and Inter-Generational Conflict in the Syrian Army, Ph.D., Johns Hopkins University, Baltimore, Maryland, 1971, Torrey G. H., Syrian Politics and the Military 1945-1958, Ohio State University Press, 1964, Torrey G. H., Aspects of the political elite in Syria, Political Elites in the Middle East, Washington, 1975, Be'eri E., Army Officers in Arab Politics and Society, Israel Universities Press, Jerusalem, 1969, Rabinovich I., Syria under the Ba'th 1963-1966, The Army-party symbiosis, Israel Universities Press, Jerusalem 1972.

³³ Van Dam N., Middle Eastern political clichés: «Takriti» and «Sunni rule» in Iraq, «Alawi rule» in Syria, Orient, 21 Jahrgang, Nr. 1, Januar, 1980, German Journal for Politics and Economics of the Middle East, Van Dam N., The Struggle for Power in Syria, Sectarianism, Regionalism and Tribalism in Politics (1961-1980), London, 1979, Van Dam N., The Struggle for Power in Syria, Politics and Society under Asad and Ba'th Party, I. B. Tauris Publishers, London-New York, 1997, Van Dam N., The Struggle for Power in Syria and the Ba'th Party (1958-1966), Orient, 14. Jahrgang, Nr. 1, März, 1973, Deutsches Orient-Institut,

نيقولاوس فان دام، الصراع على السُلطة في سورية، الطائفية والإقليمية والعشائرية في السياسة ١٩٦١-١٩٩٠، مكتبة
مديولي، القاهرة، ١٩٩٥،

Soffer G., The Role of the Officer Class in Syrian Politics and Society, Ph.D., 1968, Drysdale A. D., Center and Periphery in Syria: A political geographic study, Ph.D., The University of Michigan, 1977, Zisser E., The Syrian Army: Between the Domestic and the External Fronts, Middle East Review of International Affairs, V. 5, N. 1, March, 2001, Palmer M., The United Arab Republic, An Assessment of its Failure, Middle East Journal, Volume 20, N. 4, A., 1966, Ma'oz M., Asad, The Sphinx of Damascus, A Political Biography, London, 1988, Ma'oz M., Syria under Hafiz al-Asad: New Domestic and Foreign Policies, Jerusalem, 1975, Winder Bayly R., Syrian deputies and cabinet ministers 1919-1959, Part 1, Middle East Journal, Volume 16, N. 4, A., 1962, Winder Bayly R., Syrian deputies and cabinet ministers 1919-1959, Part 2, Middle East Journal, Volume 17, N. 1 & 2, Winter-Spring, 1963, Windrow M., Arab Armies of the Middle East Wars 1948-1973, London, 1982, Olson R. W., The Ba'th and Syria, 1947 to 1982,

Ոսումնասիրվող թեմայի վերաբերյալ արժեքավոր նյութեր են պարունակում նաև տարաբնույթ պարբերականներում տեղ գտած լրահոսն ու իրողությունների վերլուծությունները, որոնցից կարելի է նշել արաբական «Ալ-բասար», «Ալ-այամը», «Աս-սաուրան», «Ան-նուրը», «Ալ-ջումուհուրիյան», «Ալ-ջարիդան», «Ան-նահարը», «Ալ-հայաթը», «Ալ-ամալը», «Ալ-ահրարը», «Ալ-ջունդին» և այլն:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնք իրենց հերթին կազմված են ենթագլուխներից), եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը և գիտական նորույթը, ներկայացվում են հիմնական նպատակներն ու խնդիրները, պարզաբանվում են աշխատանքի մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը և թեմայի ժամանակագրական սահմանների ընտրությունը, տրվում է օգտագործված գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎ ՆՐԱ ԳԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԿՅՈՒՆՔՈՒՄ (1946-1958 ԹԹ.)»**, անդրադառնում է Սիրիայի բանակի կազմավորման, սպայական վերնախավի ձևավորման, 1948թ. արաբ-իսրայելական առաջին պատերազմի, 1949-1954թթ. Սիրիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումների, ինչպես նաև մինչև ԱՄՀ կազմավորումը բանակի օգնությամբ երկրում քաղաքական կայունության և հանրապետական կարգի ամրապնդման ուղղության ուսումնասիրությանը:

Առաջին ենթագլխում, որը կրում է **«Զինված ուժերի կարգավիճակը մանդատային Սիրիայում»** վերնագիրը, ներկայացվում է մինչև Սիրիայի անկախության ձեռքբերումը ֆրանսիական մանդատային իշխանությունների կողմից Սիրիական լեգեոնի, Լրացուցիչ (Troupes Suppletives) և Օժանդակ (Troupes Auxiliaires) զորքերի, այնուհետև՝ «Լևանտի Հատուկ զորամասերի» (Troupes Spéciales du Levant) ստեղծումը, նրանցում ազգային, կրոնական փոքրամասնությունների ներկայացվածությունը: Որոշ հետազոտողներ գրում են, որ Սիրիայի բանակի կազմավորման բուն գործընթացն սկսվել է երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում, որի

The Evolution of Ideology, Party, and State, From The French Mandate to the Era of Hafiz al-Asad, The Kingston Press, Inc., Princeton, N.J., Dawn Ernest C., The Rise of Arabism in Syria, Middle East Journal, Volume 16, N. 2, S., 1962, Perthes V., The Political Economy of Syria under Asad, London-New York, 1995, Petran T., Syria, London, Ernest Benn Limited, 1972, Ramet P., The Soviet-Syrian Relationship since 1955, Westview Press, Boulder, San Francisco & Oxford, 1990, Daoud-Agha Adnan B., Military Elites, Military-led Social Movements and the Social Structures in Developing Countries, A Comparative Study of Egypt and Syria, Ph.D., University of California, Berkeley, Michigan, USA, June 16, 1970, Bou-Nacklie N. E., Les Troupes Spéciales: Religious and ethnic recruitment 1916-1946, International Journal of Middle East Studies, Vol. 25, N. 4, N. 1993, Gautherot G., La France en Syrie et en Cilicie, Librairie Indépendante, 1920.

հիմքը Արևելյան (Հայկական) լեգեոնի Սիրիական գումարտակն է³⁴: Արևելյան լեգեոնը, որը բաղկացած էր հինգ գումարտակներից, 1919թ. բաժանվեց երկու մասի՝ Հայկական լեգեոնը 4 գումարտակներով և Սիրիականը՝ 1 գումարտակով: Սիրիական լեգեոնի թվակազմն ավելացնելու նպատակով ֆրանսիացիներն այն համարեցին ազգային, կրոնական փոքրամասնություններով: 1924թ. սիրիական լեգեոնը բաղկացած էր 6500 հոգուց՝ 137 ֆրանսիացի և 48 տեղացի սպաներով, ովքեր ռազմական ուսում էին ստանում Դամասկոսի ռազմական ակադեմիայում, որն ստեղծվել էր 1920թ. և 1932թ. տեղափոխվել Հոմս: 1925թ. ֆրանսիացիները հիմնեցին աշապես կոչված «Լրացուցիչ զորքեր», որոնք բաղկացած էին գյուղական և շարժական զորքերից, ինչպես նաև ժանդարմերիայից: Մինչ այդ նրանք հիմնել էին նաև «Օժանդակ զորքեր»: 1930թ. մարտի 20-ին Սիրիական լեգեոնը, որին միացան նաև Լրացուցիչ և Օժանդակ զորքերը, վերածվեց «Լևանտի Հատուկ զորամասերի»: «Հատուկ զորամասերը» համարվում էին հիմնականում ծայրամասային շրջանների, ինչպես նաև ազգային, կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներից, օրինակ՝ ալավիներ, դրուզներ, խամայիկականներ, քրդեր, չեքեզներ, հայեր և այլն:

Երկրորդ ենթազիխում՝ «Ազգային բանակի ստեղծումն անկախ Սիրիայում», ուսումնասիրվում է «Հատուկ զորամասերի» փոխանցումը Սիրիային, ազգային կանոնավոր բանակի և սպայական վերնախավի կազմավորումը: «Հատուկ զորամասերի» փոխանցումն ամբողջությամբ ավարտվեց 1945թ. օգոստոսի 1-ին և վերջապես Սիրիայի պաշարն ազգային բանակ ստեղծելու համար պսակվեց հաջողությամբ: Այդ շրջանից ի վեր օգոստոսի 1-ը Սիրիայում նշվում է որպես բանակի օր: 1945թ. Սիրիան օրենք ընդունեց ազգային պաշտպանության մասին, որը կառավարությանն իրավունք էր տալիս զորահավաք կատարել, նախատեսում էր երկրի պաշտպանության միջոցների կազմակերպում և սպայական կազմի ստեղծում: 1945թ. օգոստոսի 14-ին հրապարակվեց համար 190 օրենքը, որով նախատեսվում էր պաշտպանության նախարարության ստեղծումը: Այնուհետև ԶՈւ-ն արդեն բաժանված էին ոստիկանական և ժանդարմական ուժերից: Սիրիայից ֆրանսիական ու անգլիական զորքերի տարհանումը սկսվեց 1946թ. ապրիլի 15-ին և վերջնականապես ավարտվեց նույն ամսվա 17-ին: Այդ օրը Սիրիայում համարվում է ազգային տոն: Ապրիլի 17-ին, երբ օտարերկրյա վերջին զինվորը հեռացավ Սիրիայի տարածքից, երիտասարդ հանրապետությունն ուներ հինգ հազարանոց բանակ, իսկ ոստիկանությունը՝ 3500 հոգի: Սիրիայի բանակի սպայական կազմն ընդունված է բաժանել 4 դասի: Այն սպաները, ովքեր ծառայության են մտել մինչև 1926թ., պատկանում են առաջին դասին, 1926-

³⁴ Sté Van Dusen M., Intra-and Inter-Generational Conflict in the Syrian Army, Ph.D., Johns Hopkins University, Baltimore, Maryland, 1971, p. 40, Zisser E., The Syrian Army: Between the Domestic and the External Fronts, Middle East Review of International Affairs, V. 5, N. 1, March, 2001, p. 3, Drysdale A. D., Center and Periphery in Syria: A political geographic study, Ph.D., The University of Michigan, 1977, p. 76, Koekenbier P., A new model army, Thesis, University of Amsterdam, 2005, p. 49, Attallah A., President Assad's foreign policy, Thesis, American University of Beirut, 1990, p. 73, Windrow M., Arab Armies of the Middle East Wars 1948-1973, London, 1982, p. 16, Karamanoukian A., Les Etrangers et le service militaire, Paris, 1978, p. 164-187.

1935թթ. ներկայացնում են երկրորդ դասը, 1935-1946թթ. երրորդը և չորրորդ սերունդը՝ 1946թ. հետո: Սիրիայի բանակի սպայական կազմի ականավոր ընտանիքներից էր Դամասկոսի Մարդան ընտանիքը, որը երկրին տվել է վարչապետ, ինչպես նաև մի քանի բարձրաստիճան սպաներ: Արդ Առ-Ռահման Մարդանը Հունի Չախմի ղեկավարման շրջանում ուներ գնդապետի աստիճան, իսկ ավելի ուշ՝ գեներալ-լեյտենանտի: Թաուֆիկ Նիզամ Ադ-Դինը, ով 1956թ. հուլիսից մինչև 1957թ. օգոստոսը շտաբի պետ էր, Դամիշլիի ամենահայտնի ընտանիքներից էր: Հոմսի Աբասի ընտանիքից Սիրիան ունեցել է երկու նախագահ՝ Հաշիմ Ալ-Աբասին և Նուր Ադ-Դին Աբասին և ավելի քան տաս սպա, այդ թվում՝ Ֆեյսալ Աբասին, Ջաուդաթ Աբասին, ով ռստիկանության ավագ սպա էր, իսկ հետագայում Մոսկվայում դեսպան նշանակվեց և Լուայ Աբասին: Սպայական վերնախավի 3-րդ և 4-րդ սերնդից էր Աֆիֆ Բիզրին, ով 1957-1958թթ. գլխավոր շտաբի պետն էր: Նրա տեղակալն Ամին Նաֆուրին էր, իսկ հետախուզության ղեկավարը՝ Համայից Աբդել Համիդ Սառաջը: Համայից էր նաև քաղաքական գործիչ Ակրամ Հատրանին: Սիրիայի բանակի սպայական կազմից էին նաև Սիրիայի բանակի գլխավոր շտաբի պետի օգնական գնդապետ Ադնան Մալիքին, գեներալ-լեյտենանտ Մուհամմադ Ումրանը, Սալահ Ջադիդը, Ամին Հաֆեզը, Ջասիմ Ալվանը և այլոք:

Հանգամանորեն անդրադարձ է կատարվում նաև Սիրիայի բանակի մասնակցությանը 1948թ. արաբ-իսրայելական առաջին պատերազմին: 1948թ. մայիսի 15-ին՝ Իսրայել պետության հռչակման հաջորդ օրը, արաբ-իսրայելական պատերազմին Եգիպտոսի, Լիբանանի, Իրաքի և Հորդանանի հետ միասին մասնակցեց նաև Սիրիան: Սիրիան Պաղեստին ուղարկեց 1900 հոգանոց մի քանի զնդերից բաղկացած զորամիավորում, որը կազմված էր նախկին տեղական ուժերից և դեռևս չէր հասցրել դառնալ կանոնավոր բանակային զորամիավորում: Պատերազմին մասնակցող սիրիական զորքը չունեք մարտական գործողությունների անհրաժեշտ փորձ ու կարողություններ: Այդ պատերազմում Սիրիան, ինչպես նաև մասնակից արաբական մյուս պետությունները պարտություն կրեցին:

Երրորդ՝ «Ռազմական հեղաշրջումների ֆենոմենը Սիրիայում» ենթազյխում, մանրամասն վերլուծության են ենթարկվել Սիրիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումները և բանակի դերի աճը քաղաքական կյանքում մինչև ԱՄՆ-ի ստեղծումը: Հունի Չախմի, Սամի Հինաուիի և Ադիբ Շիշակլիի կատարած իրար հաջորդող հաճախակի ռազմական հեղաշրջումների պատճառով Սիրիայում 1949-1954թթ. ներքաղաքական անկայուն, սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակ էր ստեղծվել: Ներկայացվում է նաև սպայական կազմի օգնությամբ երկրում քաղաքական կայունության ամրապնդման և կառավարության՝ երկրի ինքնիշխանության ու հանրապետական կարգի ամրապնդման ուղղություն վարելը:

Ատենախոսության երկրորդ՝ **«ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԵՏ ՄԻՄՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1958-1961 ԹԹ.)**» գլուխը, վերաբերում է Սիրիայի բանակի դերակատարությանը Եգիպտոսի հետ միավորման և փլուզման ընթացքում: Մանրամասն քննության են առնվում սպայական վերնախավի «կիսառազմական հեղաշրջման» միջոցով Եգիպտոսի հետ միավորման մանրամասները և ռազմական հեղաշրջման միջոցով ԱՄՆ-ի կազմից դուրս գալու պատճառներն ու ընթացքը:

Առաջին ենթագլխում՝ «Նոր վերադասավորումներ սիրիական բանակում Արաբական Միացյալ Հանրապետության կազմավորման ընթացքում», ուսումնասիրվում է Սիրիան և Եգիպտոսը մեկ հանրապետությունում միավորելու դրդապատճառները, բանակի դերն ԱՄՀ կազմավորման մեջ, նոր կառավարության ձևավորումը և ՋՈւ միասնական հրամանատարության տակ միավորումը: ԱՄՀ-ի ստեղծմամբ տեղի ունեցավ միասնական հրամանատարության վերակազմավորում, որի արդյունքում բոլոր գլխավոր պաշտոններին նշանակվեցին եգիպտացի սպաներ: Միավորումից հետո Եգիպտոսն իր վերահսկողությունը հաստատեց առաջին (սիրիական) բանակի վրա: Բազմաթիվ հայրենասեր սպաներ հետապնդվում կամ էլ բանակից ազատ էին արձակվում: Որոշ սպաներ ծառայության տեղափոխվեցին Եգիպտոսի խուլ վայրերը, ոմանք էլ աստիճանագրկվեցին և նշանակվեցին երկրորդական պաշտոնների: Նրանց փոխարեն Սիրիայում գտնվող զորքերի հրամանատարներ նշանակվեցին եգիպտացի սպաներ: Սիրիայի բանակում կառավարող դարձան եգիպտական զինվորական հրահանգիչները, ինչն էլ առաջացրեց բանակի դժգոհությունը:

Հանգամանորեն ներկայացվում և վերլուծության է ենթարկվում նաև Եգիպտոսում բասական սպաներ Հաֆեզ Ալ-Ասադի, Սալահ Ջադիդի, Մուհամմադ Ուրանի, Աբդ Ալ-Քարիմ Ալ-Ջուռնիի և Մհմադ Ալ-Միրի կողմից ձևավորված Բասս կուսակցության գաղտնի ՌԿ-ի կազմավորման պատճառները և ազդեցությունը երկրի քաղաքական կյանքի տարբեր ուղղությունների վրա:

«Բանակի դերն Արաբական Միացյալ Հանրապետության փլուզման գործում» երկրորդ ենթագլխում փորձ է արվում պարզաբանել ռազմական հեղաշրջման միջոցով ԱՄՀ-ի կազմից Սիրիայի դուրս գալու մանրամասները, Սիրիայի սպայական վերնախավի դժգոհությունները եգիպտական ղեկավարության վարած քաղաքականության հանդեպ: ԱՄՀ-ի ղեկավար օղակների քաղաքականությունը տանում էր դեպի սիրիական բանակի փաստացի փլուզմանը: Հատկապես մեծ վնաս էին կրել բանակի տեխնիկական ստորաբաժանումները, օրինակ ռազմաօդային ուժերից հեռացվել էին բազմաթիվ օդաչուներ և տեխնիկական մասնագետներ, որոնց մեծ մասը վերապատրաստվել էր արտերկրում և նրանց ուսման վրա զգալի միջոցներ էին ծախսվել: Հալեայի ռազմաօդային ակադեմիան տեղափոխվեց Եգիպտոս՝ ուսուցման համակարգի միասնականացման պատրվակով, ինչը հանգեցրեց ակադեմիայում հիմնականում եգիպտացիների ներգրավմանը: Եթե նախկինում Հալեայի ռազմաօդային ակադեմիան ունենում էր տարեկան 20-30 օդաչու, ապա՝ Կահիրե տեղափոխվելուց հետո ակադեմիա ընդունված 20 սպաներից ավարտեցին ընդամենը 8-ը: Սակայն այն միայն սիրիական բանակի կադրային անձնակազմի հեռացումով չավարտվեց: ԱՄՀ-ի ղեկավարության ՋՈւ-ում իրականացվող քաղաքականության հետևանքով սիրիական բանակը կորցրեց մեծ քանակությամբ զինվորական գույք և տեխնիկա, ինչը տեղափոխվեց եգիպտական շրջան: Առաջին (սիրիական) բանակի համար բոլոր աշխատանքները կատարվում էին միայն եգիպտական կողմից և սկսվեց օգտագործվել եգիպտական, այլ ոչ թե սիրիական աշխատուժը: Ներկայացվում է նաև Սիրիայի բանակի սպայական վերնախավում եղած տարածայնությունները Եգիպտոսի հետ կրկին միավորվելու հարցի շուրջ:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «**ԲԱՆԱԿԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1961-1970 ԹԹ.)**», հանգամանորեն ուսումնասիրվում են ԱՄՀ փլուզումից հետո տեղի ունեցած ռազմական հեղաշրջումներն ու հեղաշրջման փորձերը, սիրիական բանակի մասնակցությունն արաբ-խրայելական երրորդ պատերազմին, Բաաս կուսակցության կառավարման շրջանում բանակի դերակատարությունը և սպայական վերնախավում ծագած տարածայնությունների ու Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալու պատճառներն ու հետևանքները:

Առաջին ենթագլխում՝ «Բանակի դերը Սիրիայում տեղի ունեցող ռազմական հեղաշրջումներում (1961-1963թթ.)», քննության են ենթարկվում ԱՄՀ փլուզումից հետո սիրիական բանակի ունեցած դերակատարությանը երկրի պետական և հասարակական կյանքում, ինչը միտված էր երկիրը ծանր կացությունից հանելուն ու զարգացման ուղիով տանելուն: 1961թ. սեպտեմբերի 28-ին Հայդար Կուզբարիի ղեկավարությամբ կատարված ռազմական հեղաշրջումից հետո բանակը մաքրվեց այն սպաներից, որոնք Եգիպտոսի հետ միավորման շրջանում բարձր պաշտոններ էին զբաղեցրել: Դա խոր դժգոհություն առաջացրեց սպայական կազմում: Ընդհանուր առմամբ, սպայական կազմն ուներ ավելի ձախակողմյան հայացքներ, քան իշխանությունում գտնվող քաղաքական գործիչները: Այդ ժամանակ սիրիական բանակում սպայական երեք խումբ կար՝ անկախականները, նասերական և բասասական սպաները: 1962թ. մարտի 28-ին Սիրիայում տեղի ունեցավ հերթական ռազմական հեղաշրջում՝ Աբդ Ալ-Քարիմ Նահլաուիի գլխավորությամբ: Սակայն, պարզվեց, որ բանակն ի գորտ չէ պահպանել իշխանությունը, քանի որ տարբեր սպայական խմբավորումների միջև տարածայնություններ կային:

Երկրորդ ենթագլխում՝ «Բանակի դերը Սիրիայում Բաաս կուսակցության կառավարման շրջանում (1963-1970թթ.)», հանգամանորեն լուսաբանվում է 1963թ. մարտի 8-ին հեղաշրջման միջոցով Բաաս կուսակցության իշխանության գալը Սիրիայում, ներկուսակցական պայքարը Սիրիայում ռազմաքաղաքական իշխանության հասնելու համար և ռազմական համագործակցությունն այլ երկրների հետ: Բաաս կուսակցությունն առաջ էր քաշում «գաղափարական բանակ» ունենալու կարգախոսը: 1966թ. փետրվարի 23-ին կատարված հեղաշրջումից հետո Բաասի ձախ ղեկավարությունը բանակը հռչակեց կուսակցության անբաժան մասը: Բանակին հնարավորություն տրվեց ոչ միայն պաշտպանել երկրի հեղափոխական նվաճումները, այլ նաև մասնակցել սոցիալական վերափոխումների իրականացմանը: Կառավարությունը բանակը գտեց աջ բասասականներից, և առաջ քաշեց «բանակը պաշտպանության և խաղաղ շինարարության» համար կարգախոսը: Սիրիայի ղեկավարությունը վարում էր արաբական բոլոր առաջադիմական երկրների հետ մերձեցնալու և համագործակցելու քաղաքականություն: 1967թ. արաբ-խրայելական երրորդ պատերազմից հետո Սիրիան հայտնվել էր ներքաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր դրության մեջ: Բաաս կուսակցությունում իրար դեմ պայքարում էին երկրի ներքին և արտաքին քաղաքականության մեջ տարբեր սկզբունքներ ու մոտեցումներ ունեցող քաղաքացիական և զինվորական խմբավորումները: Սիրիայում ոչ բոլոր զինվորներն ու սպաներն էին պարտավոր լինել Բաաս կուսակցության անդամ, սակայն նրանք պետք է հավատարիմ լինեին Բաասի գաղափարախոսությանը:

Քննարկվում է նաև ուղղիչ շարժման առաջացման դրոշմապատճառները, 1970թ. նոյեմբերին բանակի օգնությամբ Հաֆեզ Ալ-Ասադի իշխանափոխությունը, ինչպես նաև մեծ ուշադրություն է դարձվում բանակաշինության գործընթացին, բանակում բարոյա-հոգեբանական վիճակին, այն ժամանակակից գեներլ ու զինամթերքով ապահովելու խնդրին:

Երրորդ գլխի վերջին ենթագլխում՝ «Հայ ռազմական գործիչների դերը սիրիական բանակում», լուսաբանվում է Սիրիայի բանակի ստեղծման և նրա հետագա զարգացման գործում մի շարք հայտնի զինվորականների ունեցած դերակատարությունը, ովքեր բարձրաստիճան պաշտոններ են զբաղեցրել և իրենց գործունեությամբ նպաստել են Սիրիայի ազգային բանակի կայացմանն ու նրա դիրքերի ամրապնդմանը երկրի քաղաքական կյանքում: Սիրիայի բանակի ստեղծման և կայացման գործում մեծ ավանդ են ունեցել գեներալ-լեյտենանտ Արամ Գարամանուկյանը (Սիրիայի հրետանու գլխավոր հրամանատար), գեներալ-մայոր Հրանտ բեյ Մալոյանը (Սիրիայի ներքին գործերի նախարարի օգնական), գեներալ-լեյտենանտ Ալբեր Քիլեշյանը (ենթասպաների դպրոցի և պահեստային սպաների վարժարանի հրամանատար), գնդապետ Ժոզեֆ Բայրամյանը (հրետանու ստորաբաժանման հրամանատար), գնդապետ Վառձապուհ (Աֆրամ) Մալաթյանը, փոխգնդապետ Գրիգոր Հինդոյանը, Անտուան և Հիքմեթ Գուշակչիները, ինչպես նաև Գարադուբյան Լևոնը, Կուդշինյան Սմբատը, Մարաֆ Արշակը, Թարաջյան Նադիմը, Բագյան փաշա Վազգենը, Սիրիայի օդային պաշտպանության գեներալ Ավետիս Արսլանյանը և այլոք: Հայ ռազմական գործիչները, ապրելով և իրենց գործունեությունը ծավալելով Սիրիայում, իրենց տաղանդի, ռազմական հմարամտությունների և կարողությունների շնորհիվ արժանացել են զինվորական բարձր աստիճանների: Նրանք ազնվաբար ծառայել են սիրիական բանակում՝ որպես երախտագիտություն այն երկրին, որը գրկաբաց ընդունել էր ապաստան է տվել ցեղասպանությունից մազապուրծ հայ տարագիրներին: Հաշվի առնելով հայ ռազմական տարրի մատուցած ծառայությունները Սիրիային և ազգօգուտ անդրադարձը սիրիահայ գաղութին՝ նրանք պարգևատրվել են մի շարք շքանշաններով: Հայ-սիրիական հարաբերություններն ունեն երկարամյա պատմություն, կապված են պատմական տարբեր ժամանակաշրջաններում ավանդական բարեկամությամբ և համակրանքով՝ կողք-կողքի իրար հետ անցած դժվարին ճանապարհով: Սիրիայի բանակում հայ գեներալների և առհասարակ հայ ռազմական տարրի իրողությունն իր հերթին նպաստել է հայ-սիրիական հարաբերությունների ամրապնդմանը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ամփոփվում են ատենախոսության մեջ առաջ քաշված հիմնախնդիրները և ներկայացվում ստորև շարադրված՝ հիմնական եզրահանգումները:

- Սիրիայի բանակի կազմավորումը սիրիացիների հաղթանակն էր: Սիրիական բանակը մի «կաթսա» էր, որտեղ ձուլվում էին հասարակության տարբեր շերտեր, այդ թվում՝ էթնիկ և դավանական փոքրամասնությունների (ալավիներ, դրուզներ, իսմայիլականներ, քրդեր, չեքքեզներ, հայեր և այլոք) ներկայացուցիչներ: Ազգային բանակի ձևավորման գործընթացում աստիճանաբար ավելանում էր ԶՈւ-ում ազգային, կրոնական փոքրամասնությունների ներգրավման ցուցանիշը: Վերջիններիս համար

ռազմական ոլորտն ապահովում էր սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում և արտոնյալ դիրք հասարակությունում:

- Անկախության ձեռքբերումից հետո սիրիական բանակի սպայական վերնախավը հավաքագրված էր քաղաքային բուրժուազիայի ապահովված ընտանիքներից: Առաջին հերթին դա վերաբերում էր բարձրագույն սպայական կազմին, որը ներկայացված էր «հիսուն ընտանիքներով»: Անկախության հռչակումից հետո սկսվեց երկրի զարգացման բավականին բարդ ու դժվար մի շրջան: Չարգացման դրական միտումների հետ միասին սրվում էր ներքաղաքական պայքարը, չէր նվազում օտարերկրյա ուժերի ազդեցությունը Սիրիայի ներքին քաղաքականության վրա, ինչը հանգեցնում էր ներքաղաքական անկայունության:

- 1948թ. արաբ-իսրայելական պատերազմը ճանապարհ հարթեց ռազմական հեղաշրջումների համար: Այդ հեղաշրջումներն իրականացնում էին տարբեր խմբավորումների ներկայացուցիչներ, որոնք հենվում էին զինվորականների վրա: 1949-1954թթ. հաճախակի տեղի ունեցող ռազմական հեղաշրջումների պատճառով Սիրիայում ներքաղաքական անկայուն, սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակ էր ստեղծվել: Այդ հեղաշրջումները խոչընդոտեցին Սիրիայի պետական կառավարման համակարգի բնականոն զարգացմանը:

- Սիրիայի բանակի կյանքում նոր շրջան է սկսվում 1956թ. սոցիալիստական երկրների հետ բարեկամական հարաբերությունների հաստատելուց հետո: Բանակն ստացավ նորագույն զենք և տեխնիկա: Կատանայի ռազմական ստորաբաժանումներում սկսեցին ձևավորվել երկու տանկային բրիգադներ:

- 1958թ. հունվարին, չցանկանալով դաշնային հիմունքների վրա կատարել Եգիպտոսի հետ միավորումը, Սիրիայի զինվորական պատվիրակության մեծամասնությունը վճռականորեն ամբողջական միավորում պահանջեցին: Չնայած միավորումն արտաքուստ ժողովրդավարական էր, սակայն իրականում այն հաջողությամբ պսակվեց բանակի միջնորդության կամ, այսպես կոչված, «կիսառազմական հեղաշրջման» արդյունքում:

- ԱՄՆ-ի ձևավորման հենց սկզբից էլ նախագահ Գամալ Աբդել Նասերը ձեռնամուխ եղավ երկու շրջանների ՁՈւ-ի միավորմանը, որից հետո Եգիպտոսը փաստորեն իր վերահսկողությունը հաստատեց առաջին (սիրիական) բանակի վրա՝ զգալիորեն սահմանափակելով նրա դերը: Միավորումից անմիջապես հետո սիրիական բանակի ղեկավարությունը փոխարինվեց եգիպտականով, իսկ բարձրաստիճան սպաների մեծ մասը տեղափոխվեց քաղաքացիական պաշտոնների: Նման վերաբերմունքը սիրիական բանակի նկատմամբ Սիրիայում դժգոհություն առաջացրեց:

- Արդեն 1961թ. հասարակության գրեթե բոլոր շերտերը կողմ էին Եգիպտոսի հետ միավորման փլուզմանը: Սիրիայի հայրենասիրական ուժերը հույս ունեին, որ ԱՄՆ-ի կազմավորումը սիրիական և եգիպտական շրջանների համար լավ հնարավորություններ կստեղծեր տնտեսության առաջընթացի, մշակույթի զարգացման, կնպատեր երկու երկրների հետագա ժողովրդավարացմանը, հիմք կդառնար արաբական աշխարհի հետագա միասնականությանը: Սակայն ի հայտ եկան տնտեսական և քաղաքական լուրջ դժվարություններ, որոնք

հաղթահարելու համար երկար ժամանակ և ջանքեր էին պահանջվում, ինչին ոչ մի կերպ չէր նպաստում շուտափույթ միավորումը: Դժվարությունները կապված էին վարչակարգի տարբերությամ, երկու երկրների տնտեսական զարգացման տարբեր մակարդակների, բնակչության կենսամակարդակի տարբերության և այլնի մեջ: Սիրիայի և Եգիպտոսի միավորումն արագորեն հանգեցրեց Սիրիայի տնտեսական և քաղաքական դիրքի թուլացմանը: Դրան բավականաչափ նպաստեցին սիրիական շրջանի առաջադեմ ուժերի դեմ ԱՄՆ-ի ղեկավար օդակների ճնշումները: Արդյունքում, Եգիպտական վարչակարգի դեմ սկսեց հանդես գալ մաս նախկինում միասնությանը կողմնակից Բասս կուսակցությունը:

- 1962թ. մարտի 28-ին Սիրիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո բանակը որոշել էր վարել իր գործունեությունը հինգ հիմնական սկզբունքներով, որոնք ընդհանուր գծերով հետևյալն են՝

- երկրի անկախ կառավարման ապահովումից հետո հեռանալ քաղաքականությունից և զբաղվել իր հիմնական խնդիրներով,

- չմիջամտել կառավարության գործերին և քաղաքականությանը, թույլ չտալ այնպիսի սխալներ, որոնք տեղի էին ունեցել նախկինում՝ հետամուտ լինելով ազգային բարձրագույն նպատակների իրականացմանը,

- զբաղվել սահմանների պահպանությամբ,

- հետամուտ լինել երկրում իրավիճակի կայունացմանը՝ ամրապնդելով սեփական ուժերը,

- կայուն իրավիճակի հասնել ուժեղ սահմանադրական կառավարման միջոցով:

- Իրաքում 1963թ. փետրվարին իշխանության անցումը Բասս կուսակցությանն ավելի ուժեղացրեց Սիրիայի բասսականների դիրքերը, որոնք բացահայտորեն ողջունում էին Իրաքում տեղի ունեցած հեղաշրջումը և այնտեղ հաստատված վարչակարգը: Կարելի է եզրակացնել, որ իրաքյան հեղաշրջումից ուղիղ մեկ ամիս անց, 1963թ. մարտի 8-ին Սիրիայում տեղի ունեցած հեղաշրջումից հետո, Սիրիայի ղեկավարությունը ձգտում էր իշխանությունն ամրապնդել և Բասսի ազդեցությունը տարածել արաբական մի շարք երկրներում:

- 1966թ. փետրվարին տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո Բասսի ձախ ղեկավարությունը կարողացավ որոշ չափով ուժեղացնել իր ազդեցությունը, սակայն արաբական առաջադիմական երկրներում հասարակական խոր վերափոխումները չամրապնդվեցին քաղաքական համապատասխան միջոցառումներով:

- 1967թ. արաբ-իսրայելական պատերազմից հետո Սիրիան ներքաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր իրադրության մեջ էր: Պատերազմում պարտության և ձախբասականների քաղաքականության նկատմամբ անհանդուրժողականության պատճառով բանակը հայտնվեց բարոյական և հոգեբանական ճգնաժամի մեջ: Բանակն, ըստ էության, արտացոլում էր երկրի ձախբասական ղեկավարության նկատմամբ տիրող դժգոհության ու անվստահության մթնոլորտը: Բանակային շրջանակն ավելի սրափ էր գնահատում Իսրայելի կողմից Սիրիային սպառնացող վտանգը երկրի աճող մեկուսացման պայմաններում: Ի տարբերություն ձախ թևի ներկայացուցիչների՝ Հաֆեզ Ալ-Ասադն ու նրա կողմնակիցները գտնում էին, որ ժողովրդապաշտարարական պատերազմն ու անկանոն զինված խմբավորումների

միջոցով պայքարն Իսրայելի դեմ Սիրիային ոչինչ չէր տալու: Նրանք անհրաժեշտ էին համարում նախևառաջ ստեղծել ուժեղ և մարտունակ բանակ, ձեռք բերել անհրաժեշտ սպառազինություն, որի միջոցով էլ հնարավոր կլիներ ազատագրել կորցրած տարածքները:

- 1970թ. սեպտեմբերին Պաղեստինի դիմադրության շարժման, Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատի զինված խմբավորումների և հորդանանյան բանակի միջև տեղի ունեցած արյունալի զինված բախումներից հետո մարտական պատրաստականության բերվեցին սիրիական ցամաքային և ռազմաօդային ուժերը: Սիրիան միջամտեց այդ իրադարձություններին և պաղեստինցիներին օգնելու համար Հորդանան նուղարկվեցին «Աս-Սահլայի» խմբավորումները, որից հետո Հորդանանի սահմանն անցան սիրիական զրահատանկային շարասյուները: Չախբասական ղեկավարությունը ծրագրել էր նաև Հորդանան ներխուժած սիրիական տանկերին օգնություն ցույց տալ օդուժի միջոցով, սակայն պաշտպանության նախարար Հաֆեզ Ալ-Ասադը, ով նաև ռազմաօդային ուժերի հրամանատարն էր, հրաժարվեց ինքնաթիռներ ուղարկել Հորդանան, որի պատճառով զրահատանկային գործերը, կորուստներ կրելով Հորդանանի ռազմաօդային ուժերի հարձակումներից, ստիպված էին հետ վերադառնալ: Սիրիայի բանակի միջամտությունը հորդանանյան դեպքերին ձախողվեց:

- Բասա կուսակցությունում իրար դեմ պայքարում էին երկրի ներքին և արտաքին քաղաքականության մեջ տարբեր սկզբունքներ և մոտեցումներ ունեցող քաղաքացիական ու զինվորական խմբավորումները: Նման պայմաններում երկիրը քաղաքական ճիշտ ուղու վրա դնելու և իր հակաճգնաժամային ծրագրերն իրականացնելու համար Հաֆեզ Ալ-Ասադն իշխանությունը Սիրիայում կենտրոնացրեց իր ձեռքում: 1970թ. նոյեմբերին Հաֆեզ Ալ-Ասադի գլխավորությամբ բանակն իր վերահսկողությունը հաստատեց երկրում: Վերջինիս կողմից հռչակված «Ուղիչ շարժման» հիմնական նպատակը վերադարձն էր Բասսի հիմնարար սկզբունքներին և գաղափարախոսությանը, որից, ըստ նրա, շեղվել էր նախորդ ձախբասական վարչակարգը:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Բանակի (Ձինված ուժերի) դերը Սիրիայի ներքաղաքական կյանքում 1946-1963 թվականներին, ԵՊՀ, Երևան, 2008, 74 էջ:
2. Հայ ռազմական գործիչների դերը սիրիական բանակում (1946-1970թթ.), Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ (հոդվածների ժողովածու), հ. 6, Երևան, 2009, էջ 245-250:
3. Սպայական վերնախավը Սիրիայի բանակի կազմավորման շրջանում (1946-1958թթ.), Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ (հոդվածների ժողովածու), հ. 7, Երևան, 2011, էջ 242-246:
4. Բանակի դերը Սիրիայում Եգիպտոսի հետ միավորման և դրան հաջորդած ռազմական հեղաշրջման ժամանակ (1958-1961թթ.), Օրենք և իրականություն, հ. 6, (188), Երևան, 2011, էջ 38-40:

САМСОЯН АЙК ХАЧИКОВИЧ

РОЛЬ АРМИИ В ПОЛИТИЧЕСКОЙ ЖИЗНИ СИРИИ В (1946-1970 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02-“Всемирная история”.

Защита состоится 12-го декабря 2011г., в 13 часов 30 минут на заседании специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Предметом данного исследования является рассмотрение военно-политической роли сирийской армии в 1946-1970 гг., которая в силу исторически сложившихся условий, помимо обычных функций, выполняла в САР задачи своеобразного лидера политического процесса. Указанная двойственность функции национальных вооруженных сил и определяет основное направление исследования.

Исследование поставленных в работе задач имеет не только научную, но и практическую ценность, поскольку нельзя в полной мере понять внутреннюю логику и динамику политического развития современной Сирии, формирования и изменения ее внешнеполитического курса без учета роли и места армии в этих процессах.

Одним из ключевых вопросов при научном анализе роли САР на Ближнем Востоке, и в контексте ее региональной политики, является изучение функций сирийской армии. С момента обретения Сирией независимости ее вооруженные силы были не просто символом суверенитета и инструментом государственной политики, но и активным субъектом и соучастником политической деятельности, оказывающим на протяжении длительных периодов развития САР, сильное влияние на соотношение и расстановку сил внутри страны, разработку, формирование и реализацию ее внешнеполитической стратегии.

Исследуемая тема актуальна также с точки зрения разработки принципов ближневосточного направления внешней политики Республики Армения, а также курса развития армяно-сирийских отношений, с учетом того факта, что САР является одним из важнейших партнеров Армении в ближневосточном регионе.

В центре исследования диссертант ставит следующие задачи:

1. Рассмотреть основные этапы и особенности зарождения и формирования национальной армии Сирии;
2. исследовать военные перевороты в Сирии после достижения независимости;
3. показать роль сирийской армии в период объединения Сирии с Египтом в единое государство (ОАР);
4. проанализировать роль сирийской армии в разрыв объединения и выход Сирии из состава ОАР;

5. раскрыть роль Военного комитета, созданного в период объединения Сирии с Египтом, и роль в нем офицерского корпуса;

6. изучить внутри- и внешнеполитические предпосылки, характер и значение революционного переворота 8 марта 1963 г., и приход к власти партии Баас;

7. показать разногласия в офицерском корпусе в период правления левого, революционно-демократического крыла партии Баас, борьбу за власть внутриправительственной элиты и приход к власти Хафез Ал-Асала;

8. подчеркнуть роль армянских военных деятелей сирийской армии в период независимости Сирии и до прихода к власти Хафез Ал-Асала.

Научная значимость и новизна диссертации заключается в исследовании ряда аспектов, которые несмотря на достаточную изученность исторического развития Сирии в период 1946-1970 гг., до сих пор не получили исчерпывающего освещения. Отдельные аспекты темы данной диссертации освещались в армянской, советской, зарубежной историографии, однако по содержанию и структуре данная диссертация является первым полновым исследованием в отечественном востоковедении.

Работа имеет традиционную структуру и включает в себя введение, основную часть, состоящую из трех глав, которые в свою очередь подразделяются на параграфы, заключение, список использованных источников и литературы.

В ВВЕДЕНИИ обосновывается актуальность выбора темы исследования, определяются ее цели, задачи и научная новизна, дается характеристика методологической основы, практическое значение и хронологические рамки работы, а также краткий обзор использованных источников и литературы.

В первой главе диссертационной работы, озаглавленной “ПРОЦЕСС ФОРМИРОВАНИЯ АРМИИ И ЕЕ РОЛЬ В ПОЛИТИЧЕСКОЙ ЖИЗНИ СИРИИ В (1946-1958 гг.)”, подробно рассматриваются особенности создания и становления национальной армии в Сирии, сформированной на основе «Специальных отрядов», которые в основном состояли из представителей религиозных и национальных меньшинств Сирии. В данной главе рассматриваются также военные перевороты и режимы, возникшие после получения независимости Сирией, а также место вооруженных сил в политической системе САР. В конце дается краткий обзор заключений, сделанных в данной главе.

Вторая глава диссертационной работы, озаглавленная “РОЛЬ АРМИИ В СИРИИ В ПЕРИОД ОБЪЕДИНЕНИЯ С ЕГИПТОМ (1958-1961 гг.)”, подробным образом показывает роль сирийской армии в период объединения Сирии с Египтом в результате “переворота полувоенного характера”. Военный переворот 28 сентября 1961 года и разрыв объединения и выход Сирии из состава ОАР также явился предметом отдельного изучения. Параллельно, рассматривается также роль Военного комитета, созданного в период объединения Сирии с Египтом, и дается краткий обзор заключений, сделанных в данной главе.

Третья глава диссертационной работы озаглавлена “РОЛЬ АРМИИ ВО ВНУТРЕННЕЙ И ВНЕШНЕЙ ПОЛИТИКЕ СИРИИ (1961-1970 гг.)”. В ней подробным образом исследуются военные перевороты в Сирии после распада ОАР, внутривластная ситуация сложившаяся после прихода к власти партии

Баас, а также роль армии и ее участие в арабо-израильской войне 1967 г. Особое внимание уделяется наличию разногласий в офицерском корпусе, борьба за власть внутриправительственной элиты и приходу к власти Хафез Ал-Асада. В данной главе рассматривается также роль армянских военных деятелей сирийской армии в период независимости Сирии вплоть до прихода к власти Хафез Ал-Асада. В конце дается краткий обзор заключений, сделанных в данной главе.

В ЗАКЛЮЧЕНИИ представлены основные выводы по рассмотренным вопросам. В период с 1946 по 1970 гг. Сирия прошла сложный и противоречивый путь от полуколониального буржуазно-помещичьего государства до национально-демократического режима прогрессивной ориентации, предварительно испытав на себе тяготы военной диктатуры, египетского гегемонизма, буржуазного либерализма и реакционного национализма. Исследование показывает, что на протяжении истории независимого развития Сирии армия являлась важнейшим фактором в политической системе страны, оказывая серьезное влияние на ее внутреннюю политику. Пожалуй, ни в какой другой стране арабского мира вооруженные силы не играли такой доминирующей роли в политической жизни как это имело место в Сирии.

SAMSONYAN HAYK

THE ROLE OF ARMY IN POLITICAL LIFE OF SYRIA (1946-1970)

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of Doctor of Philosophy in Field of “World history” 07.00.02.

The Defense of the Dissertation will take place at 13.30 on December 12, 2011 at the Meeting of Specialized Council 006 acting at the Oriental Studies Institute of NAS RA. Address: 0019, Yerevan, av. Marshal Baghramyan, 24/4.

SUMMARY

The army of the Syrian Arab Republic played a special role in the history of that country since independence to the era of Hafiz Al-Asad. This was a period of great fluidity in Syrian political life. The role that army played in Syria after 1946 is obviously a crucial aspect of this study. Indeed, post-independent Syria cannot be considered without special attention to the army.

The purposes and aim of the thesis: The main aim of this dissertation is a many-sided investigation of the role of army in political life of Syria during the period of 1946-1970. To analyze the process of a creation of Syrian national army and its officer elite; to discuss the reasons for military overturns that took place after the independence of Syria; to clear the role of Syrian army during the process of UAR creation and its further participation in the collapse of the union; to discuss the policy of the secret Military Committee that was created during the period of the UAR and the role of the officers in it; to find out the process of power assumption by the regime of officer elite which was caused by the overturn of the 8th of March 1963 implemented by the Ba`th party; to shed a light some peculiarities of the role of Syrian army during the Arab-Israeli wars of 1948 and 1967; to investigate some peculiarities of Hafiz Al-Asad’s coup supported by the army; based on scientific approach to clear the role of Armenian military officers in Syrian army after the independence and up to 1970.

The thesis has a traditional structure, which includes an introduction, a body consisting three chapters, which are at the same time divided into paragraphs, a conclusion and a list of the used sources and literature.

In the INTRODUCTION, the relevance of the research, goals, challenges and scientific innovations are determined, practical significance and chronological periods of work are characterized, as well as the short summary of used historians and literature are given.

The first chapter of the thesis entitled as “THE PROCESS OF CREATION OF ARMY AND ITS ROLE IN THE POLITICAL LIFE OF SYRIA (1946-1958)” deals with an investigation of a creation of Syrian army and its officer corps. In the chapter the first Arab-Israeli war of 1948, the military overturns in Syria 1949-1954 as well as establishment of the republican regime supported by army before the creation of the UAR is also considered.

After having been awarded the mandate over Syria, the French reformed their troops in the area and called them the Troupes du Levant. On 20 March 1930, Syrian

Legion, The Troupes Auxiliaires du Levant and the Troupes supplétives were reorganized into the new Les Troupes spéciales du Levant. In the interwar years, these troops were very useful to the mandatory government. Thus, on 8 July 1945 the delegate general of France in the Levant, announced that the Troupes spéciales would be transferred to the Syrian and Lebanese governments. The French recruited volunteers for the Special Forces among the members of the minority communities and the lower classes of society. On August 1, 1945 these forces were turned over to the governments of Syria and Lebanon and became their national armies. Ever since, these countries commemorate Army Day on this date. When the Troupes spéciales were transferred from French to Syrian control, it was a small force of about 5,000 men. On 17 April 1946 the last French troops withdrew from Syria. The Syrians still celebrate April 17 as Evacuation Day.

The new Syrian state almost at once became embroiled in 1948 Arab-Israeli war, in which its troops were severely handled by the victorious Israelis. Three Syrian officers, namely Husni Al-Zaim, Sami Al-Hinnawi and Adib Al-Shishakli, successfully dominated the political scene from 1949 to 1954; during these years the army played a decisive role in the return to parliamentary government in 1954.

In the second chapter which is entitled as "THE ROLE OF ARMY IN SYRIA DURING THE PERIOD OF UNIFICATION WITH EGYPT (1958-1961)" the role of Syrian army in the process of unification with Egypt and then its further collapse is discussed. Some aspects of unification with Egypt through "a semi-military overturn" implemented by the officer elite are also discussed in this chapter. At the same time the reasons for Syria's leaving the UAR by means of a military overturn are also analyzed here.

The successor government survived numerous further coup attempts and took the country into a federal union with Egypt that was called the United Arab Republic (1958), but the extreme resentment of Syrian army officers being forced to play a subordinate role to the more numerous and powerful Egyptians in the new joint army was the main motive force behind yet another coup in 1961 that took Syria out of union.

In the third chapter of thesis which is called "THE ROLE OF ARMY IN SYRIAN INTERNAL AND EXTERNAL POLICY (1961-1970)" the military overturns that took place after the collapse of the UAR are investigated in details. The participation of Syrian army in the Arab-Israeli war, the role of the army during the period of rule of the Ba'th party as well as discord that appeared among the officers on one hand and the reasons and consequences of Hafiz Al-Assad's assumption of power on another hand are the main focuses of this chapter.

The relatively greater stability of Syria's military government since 1963, which at last permitted a rapid development of the country's economy, was due to the final, inevitable settlement of the generational feud within the officer corps in favor of the younger group in the March 1963 coup. In contrast to earlier left-wing and radical nationalist regimes, the group which seized power in 1963 had a political doctrine and Party framework which allowed them to survive. The doctrine was that of the Ba'th Party. The coup of March 1963 was a different kind from those that had gone before. After a result of disagreements within the Ba'thist party, a new coup in February 1966 brought the so-called neo-Ba'thist groups. The army officer corps became almost

totally politicized, within military competence and attention to duty ceasing to figure at all in the selection of officers for promotion. This had much to do with the Syrian army's disastrous defeat in June 1967 war with Israel.

In 1970 Syria intervened in the Jordan Civil War on behalf of the Palestinian guerrillas. The numbers of military officers were greatly opposed to this venture and none more than the Defense Minister, Lieutenant-General Hafiz Al-Asad, a senior Ba'thist who also served as a commander of the air forces. The government turned over his protests and dispatched a Syrian forced column to northern Jordan, while Asad, as a head of the air forces, withheld air support; as a consequence, the Syrian forces was badly mauled by Jordanian tanks and aircraft and then forced to withdraw. In November 1970 the more moderate military wing of the Ba'th party seized power under the leadership of Asad in the so-called "correctionist movement". Asad was elected president in 1971.

In development of the history of Syrian National Army participated a number of Armenian famous officers, such as Aram Karamanoukian, Hrant Maloyan, Alber Kilejyan, Joseph Bairamyan etc. Armenian officers took part in organization of the newly created Syrian army. Some of the Armenian officers participated in the Arab-Israeli wars of 1948 and 1967. They became prominent military officers owing to their top professionalism, strict discipline and expertise in the field of army. Armenian military officers were awarded various medals of Honor, not only by Syrian but also by the governments of Lebanon, Egypt and France. As far as the Arab people were concerned, Armenian officers symbolized the further strengthening of ties between Syrian and Armenian peoples.

CONCLUSIONS

During the history of sovereign Syria the army was a very important factor that played an important role in the political system of the country. This did strongly influence the internal policy of the state. Apparently, there is no country in the Arabic world where the army would have played such a decisive role as it did in the political life of Syrian Arab Republic during 1949-1970.